

Միջոցառմանը ներկա էին Վրաստանում ՀՀ դեսպանության քարտուղար Արթուր Սարգսյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, թբիլիսահայ մտավորականներ, հասարակայնության ներկայացուցիչներ:

Իր օրհնաբեր ներկայությունն էր բերել Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Գիտամշակութային կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը ողջունելով ներկաներին, հիշեցրեց Եղիշե Չարենցի այցելությունը Թումանյանի տուն, որտեղ սակայն նրան բախտ չի վիճակվում հանդիպելու Ամենայն հայոց բանաստեղծին:

Ու թեև շուրջ 100 տարի է անցել այդ օրից, այսօր արդեն

սերունդների կողմից հայ գրականության երկու ռահվիրաների շունչն է թևածում այս տանը:

Ու տարածվեց հայ գրականության գահակալ Եղիշե Չարենցի ու նրա անմահ, մարտաշունչ
,
հրաբորբոք

պոեզիայի
գոհարների

գովքը

,
Եղիշե
Չարենց
բանաստեղծի

,
հայրենիքի
հարատև
մարտիկի

,
բոցաշունչ
հայրենասերի
ստեղծագործությունների
անմահ
պաթոսը:

Միջոցառման ավարտին մասնակիցների կողմից միահամուռ հնչեց «Ես իմ անուշ Հայաստանի
նաստեղծությունը, որպես » բա

մայրենիին
ու
մայր
հայրենիքին ուղղված հպարտության գովք: